

Journal of the Society for Armenian Studies (JSAS). Vol. 3, 1987,
p.192. University of California, Los Angeles

Լույս է տեսել «Հայագիտական հետազոտությունների ընկերության հանդեսի» երրորդ համարը (Լոս Անջելես, 1987)։ Գլխավոր խմբագիրն է պրոֆ. Ա. Սանշյանը, խմբագրական կոլեգիայի անդամներն են Գ. Բարդաքչյանը, Ռ. Հովհաննիսյանը, Թ. Մաթևոսյանը, Վ. Օշականը, Ս. Սանին, Ռ. Թոմասոնը։

Հանդեսը սկսվում է Ա. Տերյանի «Կորյունի» Վարք Մաշտոցի-ն որպես ներդրած հոդվածով, Հոգվածագիրը նշում է, որ մինչ այժմ ուշագրություն է դարձվել Կորյունի աշխատության կենսագրական և պատմական բովանդակության վրա, սակայն դրա գրական ձևը բավարար կերպով չի ուսումնասիրվել։ Հոգվածում հիմնականում վերլուծվում է Վարքի ընդհանուր խմբագրության նախաբանը։ Ա. Տերյանը ուշագրություն է դարձրել ճարտասանական ավանդության հետ Կորյունի գրական ոճի ունեցած ազդակցական կապի վերաբերյալ Կ. Մելիք-Օհանջանյանի տեսակետի վրա, որից բխում է, որ Վարքը կառուցված է Գիրք պիտոյից-ում տրված, ներդրողին բնորոշ վեց սկզբունքներով։ Հոգվածագիրը ցույց է տալիս, որ Կորյունի Վարքի կառուցվածքը, այնուամենայնիվ, սահմանափակված չէ ճարտասանական դասագրքերում ներդրողին բնորոշող նկարագրություններով, ոչ էլ կախված է ճարտասանական վարժություններից, այլ տեսական տեքստերին և գրական մոդելներին լավատեսական լինելու վկայություն է։ Չնայած կենսագրական և վարքագրական տարրերի գերակշռությանը, Կորյունի երկը ստեղծված է որպես ներդրողի նախաբանում ազդեցություն և ազդվել թառերի հաճախակի կիրառումը, ըստ Ա. Տերյանի, որոշակի է՝ երկի ժանրային պատկանելությունը պարզելու համար։ Համեմատության արխտոսեյան սկզբունքը, դասական ներդրողին բնորոշ տարրերով հանդերձ, Կորյունի երկի առանձնահատկությունն է։ Մեծարժանի՝ որպես աստվածային մարդու, Կորյունի գովքը, ինչպես նշում է Ա. Տերյանը, հաստատում է Վարքի ներդրող լինելը։

Ս. Քաունի «Մինչ այժմ չճանաչված մ. թ. 1272 թ. մի ժամանակագրություն» հոդվածում

արծարծվում է «Պատմություն վասն ազգին» նետողաց երկի հեղինակի հարցը, որի շուրջ գոյություն ունեն տարբեր կարծիքներ։ Ըստ մի կարծիքի, հեղինակը Մաղաքիա Աբեղյան էր, ըստ մյուսի՝ Վարդան պատմիչը, իսկ ըստ երրորդի՝ Գրիգոր Ակներցին։ Հոգվածագիրը ենթադրում է, որ հեղինակը եղել է Ավագ Անապատի Թաղեոսը։ Սակայն նա, այնուամենայնիվ, նկատի ունենալով խնդրո առարկա երկի հեղինակության հարցի հետ կապված երկընտրանքները, այն դասում է հայ անանուն պատմությունների շարքը՝ հետազոտության ներկա վիճակում։ Ս. Քաունն նշում է, որ եթե ժողովրդական ժողովրդական թիվ 32 ձեռագրի՝ այս երկի հեղինակային օրինակ լինելը, մնում է ենթադրել, որ այն մոտ էր կանգնած 1272 թ. ժամանակագրությանը և, որպես այդպիսին, արժանի է ճանաչման այդ աշխատության հետագա ամբողջական հրատարակություններում։ Ս. Քաունն իր հոդվածին կցել է նշված ձեռագրի (որը ընդգրկում է նաև Միքայել Ասորու ժամանակագրության հայերեն թարգմանությունը) բովանդակությունների և գլխավոր հիշատակարանների անգլերեն թարգմանությունը ներկայացնող մի հավելված։

Ի. Հավանները, իր «Բենեդիկտյան» Սաահման-ի նախաբանը հոգվածում գրում է, որ հայոց եկեղեցին՝ իր հարուստ և հին ավանդույթներով, երբեք նեղ ազգայնական չի եղել իր աստվածաբանությունում, իր աստվածաբանական գանձերին շարունակաբար ավելացնելով մյուս եկեղեցիների կարևոր գրավոր գործերը։ Այդպիսի ընկալումը, ըստ հոգվածագրի, սովոր էր նաև միջին դարերում, երբ մի շարք լատիներեն և հունարեն աստվածաբանական աշխատություններ թարգմանվեցին հայերեն։ Դրանց թվին են պատկանում Ներսես Լամբրոնացու կողմից կատարված մի շարք թարգմանությունները։ Ներսես Լամբրոնացուն Անտիոքում գտնված ժամանակ հիացրել էր Ս. Պողոս վանքի վանականների զգառաքինազարդ միայնությունն և ըզգնությունն և տեղեկանալով, որ նրանք Բենեդիկտյան կանոնների հետևողներն էին, որոշում է թարգմանել Գրի-

գոր Ա պապի Տրամախոսությունը («Բանք պատմողականք»), որում պատմվում է ս. Բենեդիկտոսի կյանքը: Սակայն նա անմիջապես չի իրականացնում իր մտադրությունը, այլ, ինչպես նշում է հոգվածագիրը, նախ թարգմանում է Բենեդիկտոսի «Սահմանք»: Կարճ ժամանակ անց Ներսեսը թարգմանեց Գրիգոր Ա պապի Տրամախոսությունը Զաքարիա պապի հունարեն թարգմանությունից: Ըստ հոգվածագրի, մյուս վավերագիրը՝ Բերենգերի (Վրնչերի) Բենեդիկտյան վանական սահմանադրությունը, Ներսեսը թարգմանել է Բենեդիկտոսի «Սահմանք» հետ միաժամանակ, քանի որ առաջինը նույնպես օգտագործվում էր Ս. Պողոսի վանքում: Ընդ որում, այս վավերագրի բնագիրը կորել է, պահպանվել է միայն Ներսեսի թարգմանությունը: Ինչպես նշում է Ի. Հավաները, հետագայում այս երեք տեքստերը հանդես են գալիս մի հին ձեռագրում (Մաշտոցի անվ. Մատենադարան, № 4947) և դրա մի ընդգրկնակությունում (Սուրբ Ղազար, X 678), բայց միայն Բերենգերի վանական սահմանադրությունն է ամբողջությամբ խմբագրված: Ըստ հոգվածագրի, Ներսեսի հայերեն թարգմանությամբ ամբողջ «Սահմանք» հրատարակությունը նախապատրաստելիս երկի նախաբանը լավագույն մեկնարկային կետն է, քանի որ դրա աղբյուրն շատ ձեռագրեր են պահպանվել և այն հնարավորություն է տալիս գնահատելու «Սահմանք» ամբողջ տեքստը պարունակող միակ հայտնի ձեռագրի արժանահավատությունը: Ի. Հավաների կարծիքով, «Սահմանք» ամբողջ տեքստի հրապարակումը միայն մեկ հայտնի ձեռագրի հիման վրա, այնուամենայնիվ, պայմանական կլինի, քանի դեռ դրա բոլոր քաղվածքների ինքնությունը չի հաստատվել և ամբողջացվել քննական տեքստում: Այն հանգամանքը, որ այդ նախաբանը որոշ ձեռագրերում հանդես է գալիս «Վարք սրբոց հարանց» ժողովածուների և եկեղեցական հայրերի գրվածքների անթուղիական կազմում, Ի. Հավաներին բերել է այն եզրակացության, որ այդ ձեռագրերը կիրառվել են ընթերցողներին հոգևոր խրատներ տալու համար, այսինքն հոգևոր ընթերցանության նպատակով: Հետագոտից այնուհետև անդրադառնում է նախաբանը պարունակող ձեռագրերի նկարագրությանը և փոխկապակցություններին: Ուշադրություն դարձնելով Բենեդիկտոսի «Սահմանք» նախաբանի այլ հայերեն թարգմանությունների վրա, Ի. Հավաները վերջինս բերում է Ներսեսի թարգմանությանը, նշելով, որ դա մի փորձ է վերականգնելու այն նախաբանը, որից ծագել են պահպանված ձեռագրերը: Հոգվածի վերջում Ի. Հավաները ներկայացնում է հայերեն տեքս-

տի իր կողմից կատարված անգլերեն թարգմանությունը:

Հ. Գյուրիգյանի՝ «Ամիրդովաթ Ամասիացի» նրա կյանքը և ավանդները հոգվածում խոսվում է այն կարևոր ներդրման մասին, որը կատարել է հայ գիտնականը ինչպես հայկական, այնպես էլ համաշխարհային գիտության պատմության մեջ: Ամիրդովաթի մեծությունը, ըստ հոգվածագրի, կայանում էր նրանում, որ նա, հենվելով իր ժամանակին նախորդած բժշկագիտության նվաճումների վրա, դրանց ավելացրեց իր սեփական գործունեության արդյունքները: Անդրադառնալով Ամիրդովաթի կյանքին և գործունեությանը, Հ. Գյուրիգյանը ուշադրություն է դարձնում հայ բժշկագետի աշխատությունների աղբյուրների կառուցվածքի և բնույթի վրա: Այն հիմնական հարցին, թե արդյո՞ք գոյություն ունի հայ ուրույն բժշկական ավանդույթ, որը կարող էր նպաստել Ամիրդովաթի գործունեությանը, հոգվածագիրը դրական պատասխան է տալիս: Այս առումով նշանակալից է, որ Ամիրդովաթը ուսումնասիրել էր հայ հեղինակների (Մխիթար Հեռացի, Ահարոն, Ստեփանոս, Հակոբ, Վահրամ և ուրիշների) աշխատությունները: Հենվելով Ամիրդովաթի հիմնական աշխատությունների վրա, Հ. Գյուրիգյանը մանրամասն վերլուծում է բժշկագիտության տարբեր բնագավառներում ներառված գիտնականների հարցը՝ հարակից գիտական ճյուղերի լայն ընդգրկմամբ:

Ռ. Հյուսենը իր «Հայ ազնվականության որոնումը. հինգ հայ տոհմերը Օսմանյան կայսրությունում» հոգվածում գրում է, որ հայոց ազնվականության պատմությանը բնորոշ էր նախաբարական տոհմերի թվաքանակի նվազումը անցյալ դարերի ընթացքում: Եթե IV դարում դրանց թիվը հասնում էր 50-ի, ապա, պակասելով, այն V դարում կազմեց մոտ 42, VI դարում՝ 35, իսկ VIII-ում՝ ընդամենը՝ 20: Հայոց վերջին՝ Կիլիկյան թագավորության 1375 թ. անկումից հետո այն ավելի նվազեց: Հոգվածագրի նպատակն է քննել օսմանյան տիրապետության տակ հայտնված հինգ հայկական տոհմերի արքայական կամ իշխանական ծագում ունենալու նրանց հավակնությունը: Ռ. Հյուսենը իր խնդիրն է համարում որոշ չափա-նիշներ սահմանել այդպիսի պահանջի իրավասությունը հաստատելու համար: Քննության են առնվում Կոստանդնուպոլսի Դադյանների, Թոմարզայի Դեդեյանների, Զմյուտնիայի և Կահրեբի Նուբարյանների, Արոյանների և Վանի Ադյանների տոհմական ծագման հարցերը: Դադյանների և Դեդեյանների Արծրունյաց արքայական տոհմի հետ ունեցած ծագմանաբանական կապը Ռ. Հյուսենը վիճելի և կասկա-

ծելի է համարում: Նուբարյանների իշխանական ծագումը, ըստ հետազոտողի, կասկած չի հարուցում, քանի որ նրանց ծագումնաբանական արմատները կապված են Փարսաղանյանների հ, հնարավոր է, Օրբելյանների ու նրանց միջոցով՝ Մամիկոնյանների հետ: Արրոյանների պատկերացումը արքայական Բագրատունիների հետ ունեցած ծագումնաբանական կապի մասին Ռ. Հյուսենը հազիվ վստահելի է համարում: Աղոյանների՝ Գնունիներից սերած լինելու վարկածը, հանդիսանալով միայն ընտանեկան ավանդության արգասիք, ըստ հետազոտողի, թույլ է փաստարկված: Ռ. Հյուսենը կարևոր է համարում հետևյալ հարցերը. ինչպե՞ս է ինչո՞ւ էր ազնվականությունը նվազում, իսկ այնտեղ, որտեղ այն շարունակեց իր գոյությունը, ինչպե՞ս կարողացավ պահպանել իր հարստությունը և գիրքը: Հայոց մեջ կարևոր է, ըստ Ռ. Հյուսենի, հասկանալ, թե ինչպե՞ս սեփական արժանապատվության և ազգի հանդեպ ունեցած պարտականության զգացումները զարգանալով հանդես եկան նոր թուլանդակության՝ առևտրական, ռազմական, կրթական, բարեգործական բնագավառներում:

Ջ. Ռասելը Կոստանդին Երզնկացու «Բանք յաղագս արեգականն արդարութեան...» տաղին նվիրված իր հոդվածում նախ համոզմունքի անդադառնում է բանաստեղծի հայրենի գավառի պատմությանը, նրա հայրենակից և ժամանակակից Պլուզ Հովհաննես Երզնկացու գրական գործունեությանը, Կոստանդին Երզնկացու ունեցած դժարություններին՝ կապված վանականների միջավայրում նրա ստեղծագործական գործունեության հետ, ինչպես նաև նրա բանաստեղծությունների ձևագրական ընդգրկնակություններին և հետագա հրատարակություններին:

Հոդվածագիրը տաղին մոտենում է հարգանք տածելով Կոստանդին Երզնկացու կրոնական անկեղծության հանդեպ: Ըստ Ջ. Ռասելի, Երզնկացու տաղը «աղոթասեր մտորում է աստծու տիեզերքի բանական կառուցվածքի մասին»: Արեգակի հավասարեցումը արդարությանը, ինչպես հունական փիլիսոփայության, այնպես էլ քրիստոնեության մեջ հին էր: Հայոց ավանդությունը, ինչպես նշում է Ջ. Ռասելը, Քրիստոսին և Աստծուն դիտում է որպես արդարության Արեգակ: Հոդվածի վերջում բերված է բանաստեղծության Ջ. Ռասելի կողմից կատարված անգլերեն փայլուն թարգմանությունը:

Կ. Բելեդյանը իր «Հակոբ Օշականը՝ քննադատ» հոդվածում «Համապատկեր արևմտահայ գրականության 10-հատորյակում, ինչպես նաև այլ պարբերականներում և մենագրու-

թյուններում պարունակված նյութերի հիման վրա քննում է արևմտահայ գրական կյանքում Հակոբ Օշականի, որպես գրաքննադատի խաղացած դերի հարցը: Հակոբ Օշականի քննադատական գործունեության մեջ նա երեք փուլ է նշում: Սկզբնական՝ կոստանդնուպոլսյան փուլը բնորոշվում է իսկական քննադատի համբավ ձեռք բերելով: Հակոբ Օշականը, ինչպես նշում է հոդվածագիրը, գրական քննադատին դիտում էր որպես «անհատականությունից զուրկ մի մարդու», որը հանդես էր գալիս որպես գրականության պահպանող: Երկրորդ փուլը ընդգրկում է առաջին համաշխարհային պատերազմից հետո ընկած ժամանակաշրջանում նրա գործունեությունը: Անդրադաճալով նույն հարցերին՝ Հակոբ Օշականը հրատարակում է ընդարձակ մենագրություններ, որոնք իրենց արտահայտչականությամբ և համամասնությամբ հիմնավորապես տարբերվում էին առաջին փուլի հոդվածներից: Վերջին՝ «Համապատկեր» լույս ընծայման վճռական փուլում Օշականը վերադարձավ գրական քննադատության հերթմանը: Հոդվածագիրը Հակոբ Օշականի քննադատական աշխատություններից անդրադարձել է նրա «Գրականության համար» երկարաշունչ ակնարկին՝ տպագրված Փարիզում հրատարակվող «Ջվարթնոց» պարբերականում: Այստեղ Օշականը կրկնում է գրական քննադատության իր հերթումը: Անկախ գրաքննադատի արժանիքներից, Հակոբ Օշականը նրան համարում է մտավոր օրգանիզմի մակարոյծ, ինչ-որ մի երկրորդական անձ, որը դալիս է ստեղծագործությունից հետո այն ոչնչացնելու ձգտումով: Հայոց Սփյուռքի կապակցությամբ Օշականը նշել է, որ քննադատությունը մասնատում և թուլացնում է դրա առանց այն էլ վտիտ գրականությունը: Կ. Բելեդյանի կարծիքով, ընթերցելով նշված ակնարկի վերջին էջը, կարելի է մտածել, որ Օշականը խոսում է այլ՝ ստեղծագործական բնույթի քննադատության մասին: Ըստ հետազոտողի, Հակոբ Օշականը փորձել է գտնել քննադատության նոր ձև, որը կընդգրկեր վերլուծողի անհատականությունը և կձգտեր դեպի «կյանքի և փոխի վավերացում»:

Մ. Պետրոսյանի «Գորկու նամակները և հայոց բնավորությունը» հոդվածում քննվում են Արշիլ Գորկու (Ոստանիկ Աղոյան) 1937-1948 թթ. գրված նամակներն իր ջրղջը՝ Վարդուշին և նրա ամուսնուն: Այդ նամակները ըստ հոդվածագրի, ոչ միայն նպաստում են Արշիլ Գորկու արվեստի ավելի խոր ըմբռնմանը, այլ նաև գրական արժեքավոր վավերագրեր են: Մ. Պետրոսյանի կարծիքով, հայոց անցյալից եկող հիմնական մոտիվը, որ միշտ տրոփում էր Արշիլ Գորկու ենթագիտակցության մեջ, «ամ-

րոց դարձած աշխարհի զգացումն էր՝ ձակա-
տագրի բերումով հայերը իրենց անհատակա-
նությունը և ավանդույթները անձեռնմխելի պա-
հելու համար ուղղակի և փոխաբերական նա-
հանջ կատարեցին դեպի իրենց ներքնաշխարհը՝
Հոգվածագիրն ընդգծում է, որ Արշիլ Գորկին
ոչ միշտ էր վկայակոչում հայոց պատմության
խրոհություններն իր գեղարվեստական համոզ-
մունքները լուսաբանելու նպատակով: Գեղագի-
տական հիմնական սկզբունքների շուրջ ծավալ-
ված Արշիլ Գորկու քննարկումները, ըստ Մ.
Պետրոսյանի, հաճախ շղարշված են ընդհան-
րություններով: Ինքնապատկերման մեկ տա-
րի առաջ՝ 1947 թ. գրված մի նամակում, Ար-
շիլ Գորկին շարադրել է իր գաղափարները
մարդկային առաջադիմության մեջ՝ երևակայու-
թյան խաղացած դերի մասին և այն, թե ինչի

է ձգտում ինքը իր արվեստով: Ինչպես նշում
է հոգվածագիրը, ժամանակակիցների վկայու-
թյամբ, Արշիլ Գորկու խոսքը, վարվելաձևը,
ինչպես նաև իր արվեստը սնվում էին նրա մե-
կուսացվածության զգացումով: Արշիլ Գորկին
վերացարկման մեջ էր տեսնում ժամանակակից
աշխարհի հոգևոր լճացման պատճառներից մե-
կը: Միևնույն ժամանակ, Մ. Պետրոսյանի կար-
ծիքով, նշանակալից էր Արշիլ Գորկու մշակու-
թյան, սեփական հայկական ակունքների գի-
տակցումը:

Հանդեսում լույս են տեսել Ք. Քոբսի, Ռ.
Թոմսոնի, Ս. Քաունի, Լ. Ավդոյանի, Դ. Քուլմ-
շյանի, Դ. Քալոնի, Բ. Քուլիբի, Է. Համփի,
Ա. Արսլանյանի, Հ. Ֆեյնի և այլոց գրախոսա-
կանները:

Պատմ. գիտ. դոկտոր Է. Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

V. Nersessian, Armenian Illuminated Gospel Books, The British Library Board, London, 1987, 100 p., 65 ill.

Վ. ՆԵՐՍԵՍՅԱՆ, Հայկական նկարազարդ ավետարաններ, Բրիտանական գրադարանի վարչություն, Լոնդոն, 1987, 100 էջ, 65 նկար:

1987 թ. դեկտեմբերի 11-ից մինչև
1988 թ. մարտի 6-ը Լոնդոնի Բրիտանական
գրադարանում կազմակերպված էր «Հայկական
նկարազարդ ավետարաններ» խորագիրը կրող
ցուցահանդես, որտեղ ներկայացված էին նույն
հաստատության սեփականությունը հանդիսացող
ընտիր ձեռագրեր: Այդ առիթով լոնդոնյան գրա-
դարանի տնօրինությունը Լիսաբոնի Գալուստ
Կյուպեկյան հիմնարկության աջակցությամբ
լույս է ընծայել «Հայկական նկարազարդ ավե-
տարաններ» գիրքը, որի հեղինակն է հայագետ
Վրեժ Ներսեսյանը: Բրիտանական գրադարանի
աշխատակից Վ. Ներսեսյանը հեղինակ է մի
շարք հոգվածների և գրքերի, որոնք վերաբե-
րում են հայ տպագիր գրքի պատմությանը,
թղթապատյան շարժմանը և այլ խնդիրների: Նրա
ուսումնասիրությունների շարքում առանձնա-
հատկ տեղ է գրավում Բրիտանական գրադարա-
նի հայկական ձեռագրերի, մանավանդ նկարա-
զարդ օրինակների հետազոտությունը: Գրքագիր
այդ գանձերին են նվիրված Վ. Ներսեսյանի
վերջին տարիների ծավալով ոչ մեծ հրապարա-
կումները:

Նոր գրքի առաջարկում հեղինակը համա-
ռոտ ու սպառնիչ տեղեկություններ է տալիս
քրիստոնեության ստեղծած արվեստի, ավետա-
րանների նկարազարդման համակարգի, հայ և

կեղեցու և հայոց պատմության, Աստվածաշն-
չի հայերեն թարգմանության ու նաև հրատա-
րակության մասին: Բացի այդ, Վ. Ներսեսյանը
սեղմ կերպով անդրադառնում է հայկական
մանրանկարչության ակունքներին, հիշատակե-
լով VII դարի հեղինակ Վրթանես Քերթոզի նը-
շանավոր «Հաղագս պատկերամարտից» երկը,
որ խոսվում է հայկական եկեղեցիները զար-
դարող նկարաշարի մասին: Այստեղ գիտնակա-
նը տեսազաշտից դուրս չի թողնում և Աղթա-
մարի Ս. Խաչ եկեղեցու ներսը ձևավորող որմ-
նանկարները, որտեղ պահպանվել է դարերի
խորքից եկող ավանդական, հինավուրց պատ-
կերազրությունը: Առաջարկում հեղինակը գա-
ղափար է տալիս մեզ հասած հնագույն ման-
րանկարների վերաբերյալ, առաջին ամբողջո-
վին պահպանված նկարազարդ ձեռագրի՝ Մլթե
թագուհու 862 թ. Ավետարանի, մինչև X դա-
րի վերջը ընդօրինակված Ավետարանների նը-
կարաշարի թիմաների, դրանց ձևավորման հայ-
կական եղանակի, հայկական եկեղեցու պատ-
մահաբանության վերաբերյալ:

Գրախոսվող գրքի ժեռապատկերը Բրիտանա-
կան գրադարանում՝ վերնագրված րոժինը
բացվում է կիլիկյան մանրանկարչության օրի-
նակների քննությամբ: Բրիտանական գրադա-
րանի կիլիկյան մատյանների կարգում հնագույն